**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ՈՐՈՇՈՒՄ N 561– Ա**

24 օգոստոսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՐՍԵՆ ՖԻՈԴՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 24-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի «ա» ենթակետի և 46-րդ կետի «ա» ենթակետի, 52.1 կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 69-Ա որոշումը և հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 18-ի՝ թիվ 2 արձանագրությունը՝

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողամասի վարձակալության համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված Արսեն Ֆիոդրի Ասատրյանին, վարձակալության իրավունքով, 210000 / երկու հարյուր տասը հազար / դրամ տարեկան վարձավճարով, տրամադրել 1.71614 հեկտար ջրային նշանակության հողամաս /ծածկագիր՝ 08-006-0120-0002/ :

2. Օրենքով սահմանված կարգով Արսեն Ֆիոդրի Ասատրյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

24 օգոստոսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2023 թվականի N 562-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0013-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնող 08-007-0013-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմաններում նոր առաջացող 0,024606 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Շիրակի խճուղի, 25/1 հողամաս»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«25» օգոստոսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 563– Ա**

25 օգոստոսի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 24-րդ կետերի, 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 02-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 108-րդ և 109-րդ կետերի դրույթներով՝

**Որոշում եմ՝**

1. 2023 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 12:00-ին հրավիրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու արտահերթ նիստ, որը տեղի կունենա Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, 29 շենք, մշակույթի տան շենք):
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի նախագիծը՝ համաձայն հավելվածի:
3. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը, օրենքով սահմանված ժամկետում տրամադրել ավագանու անդամներին և տեղադրել համայնքի պաշտոնական կայքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

25 օգոստոսի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի
2023 թվականի օգոստոսի 25-ի թիվ 563– Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի արտահերթ՝ տասներորդ նիստի օրակարգը հաստատելու մասին*
2. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին գյուղի բնակիչ Վարդան Գրենիկի Խնկոյանին դրամական օգնություն տրամադրելու մասին*
3. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հայկավան գյուղի բնակիչ Մկրտիչ Էլֆիկի Ավետիսյանին դրամական օգնություն տրամադրելու մասին*
4. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 4 գերեվարված զինծառայողների ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու մասին*
5. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի դպրոցներ առաջին դասարան հաճախող երեխաներին նվերներ գնելու նպատակով գումար տրամադրելու մասին*
6. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 53 սոցիալապես անապահով ընտանիքների անդամների դրամական օգնության վերաբերյալ դիմումների քննարկման մասին*
7. *Հանրապետական օլիմպիադաներին 1-ին կարգի դիպլոմակիր Անահիտ Արտակի Մնացականյանին և 3-րդ կարգի դիպլոմակիր Երազիկ Վահանի Սերոբյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին*
8. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի մարզիկներին և մարզիչներին դրամական աջակցություն տրամադրելու մասին*
9. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*
10. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 234-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*
11. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 235-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*
12. *Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Յուրի Ղամբարյան փողոցի*

2-րդ անցուղու 9ա շենքի թիվ 5 բնակարանը վարձակալ Անահիտ Գեղամի Բարսեղյանի ընտանիքի անդամներին նվիրաբերելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների բանավան 3-րդ փողոցի 1/2 շենքի թիվ 2 բնակարանը վարձակալ Կարինե Մերուժանի Գաբոյանին նվիրաբերելու մասին
14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների բանավան 3-րդ փողոց, 1/2 շենքի թիվ 19 բնակարանը վարձակալ Արթուր Սուրիկի Տոնոյանի ընտանիքի հինգ անդամներին նվիրաբերելու մասին
15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-119-0031-0004 կադաստրային ծածկագրով հողամասում քաղաքացի Գևորգ Ժորժիկի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված անասնաշենքը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-068-0002-0003 կադաստրային ծածկագրով հողամասում քաղաքացի Սերգե Գառնիկի Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված անասնաշենքը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կապս բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 08-052-0045-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը և դրա վրա գտնվող անավարտ շինությունը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու և օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին
18. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր՝ Հայկավան) 08-061-0023-0004 կադաստրային ծածկագրով 0,12089 հեկտար հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին
19. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 01-ի թիվ 88-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին
20. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 67-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 25-ի թիվ 46-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
22. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 9 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
23. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
24. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 1-ի թիվ 100-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
25. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
26. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմից աճուրդավար ու արձանագրող նշանակելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 27-ի թիվ 86-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
27. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 58-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին մասին